ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-23/9» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՄԱՆ(ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

22-ը օգոստոսի 2024թ.
Ժամը 12^{30}

Մասնակցում էին՝
Գնահատողներ՝
- ՀՀ ՁՈՒ ԳՇ ԱՎ ինժեներաավիացիոն բաժնի պետ, փոխգնդապետ Մ.Մկրտչյան,
- ՀՀ ՁՈՒ ԳՇ ԱՎ ինժեներաավիացիոն բաժնի ավագ ինժեներ, փոխգնդապետ Ա. Ջհանգիրյան,
- ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ՏԱ վարչության ապահովման 2-րդ բաժնի գլխավոր մասնագետ Լ.Թունյան,:

Բացակայում՝
- ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ՏԱ վարչության ապահովման 2-րդ բաժնի պետ փոխգնդապետ Գ. Սարգսյան

« ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-23/9» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Սիմոնյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.
2.«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-23/9» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4 Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-23/9» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և այդպիսիք չճանաչված մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Ա. Սիմոնյան)

ՀՀ ՊՆ կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-23/9» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակցի անվանում
1	«ԿԱՊԻՏԱԼ ԳՐՈՒՊ« ՍՊԸ
2	«ՌԵԱԼ ԲՈՒՍԻՆԵՍՍ» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2 .«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-23/9» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Ա. Սիմոնյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը **www.armeps.am** կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:
2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:
2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-23/9» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին):
Բացառությամբ՝
-«ՌԵԱԼ ԲՈՒՍԻՆԵՍՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատող հանձնաժողովի կողմից մերժվել է քանի որ հայտի ֆայլերը հնարավոր չի եղել բացել և այդ իսկ պատճառով գնահատող հանձնաժողովը հնարավորություն չի ունեցել այն գնահատելու:
- «ԿԱՊԻՏԱԼ ԳՐՈՒՊ« ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի Հավելված N 1.1-ում 1-ին չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված է՝
- էլեկտրական՝ (V/Hz)230/50 սակայն նշված չէ ֆազերի քանակը, անհրաժեշտ է հստակեցնել ֆազերի քանակը:
- Ճնշումը (բար/ՄՊա)20-մինչև 160/2-առավելագույնը 16, հրավերում նախատեսված է առնվազն 145-150 ՄՊա:
- Հզորությունը (լ/ժ) մաքս. 600, հրավերով սահմանված է հստակեցնել առնվազն 500-600լ/ժ անհրաժեշտ է հստակեցնել ներքին շեմը:
- Էլեկտրաէներգիայի սպառում (կՎտ) 3, հրավերում նախատեսված է առնվազն 4-5 (կՎտ) շեմը:
- Մալուխի երկարությունը (մ) 5, հրավերում նախատեսված է առնվազն 30-40մ. շեմը
- Քաշը (առանց պարագաների) (կգ) 18.88, հրավերում նախատեսված է առնվազն 12-15կգ շեմը:
- Չափերը (L ×W×H) (մմ)404×461×968, հրավերում նախատեսված է առնվազն երկարություն՝ 350-400մմ, լայնք՝ 300-400մմ, բարձրություն՝ 500-600մմ, ոչ պակաս շեմը

Վերը նշվածը չափանիշներից բացի, նշված չէ հրավերով նախատեսված այլ չափանիշներ,
Օրինակ նշված չէ՝ սարքի տեղափոխման համար նախատեսված՝ առնվազն երկու անիվների, ըստ բարձրության կառավարվող տելեսկոպիկ մետաղյա բռնիչի առկայություն, բարձր ճնշման ճկափողի տեղավորվումը՝ սարքի առջևի մասում փաթաթելու միջոցով, որն ամրացվում է առնվազն երկու ռետինե էլաստիկ գոտիներով, էլեկտրական լարի փաթաթման (տեղավորման) համար սարքին ամրացված կեռիկների առկայություն, պարագաների տեղավորման համար սարքի վրա գրպանի առկայություն և այլն:
Անհրաժեշտ է 1-ին չափաբաժնի ապրանքի տեխնիկական բնութագիրը ներկայացնել հրավերի պահանջներին համապատասխան: Ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման»

կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը կասեցրել է հայտերի գնահատման նիստը և 14.08.24թ.ծանուցել մասնակցին ծանուցումը ստանալուց հետո սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Սահմանված ժամկետում մասնակիցը ներկայացրել է արձանագրված անհամապատասխանության շտկված տարբերակը և նիստը շարունակվել է 22.08.2024թ.

Գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվեց, որ

«ԿԱՊԻՏԱԼ ԳՐՈՒՊ« ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրի շտկված տարբերակը չի համապատասխանում հրավերով պահանջվող տեկնիկական բնութագրին, մասնավորապես.

- մասնակցի ներկայացված տեխնիկական բնութագրում ապրանքի ճնշումը, քաշը չեն համապատասխանում հրավերով նախատեսվածին, ինչպես նաև «ԿԱՊԻՏԱԼ ԳՐՈՒՊ« ՍՊԸ-ն չի նշել հետևյալը.
- գերտաքացման, ջրի անբավարար քանակի, ատրճանակի փակման ժամանակ ավտոմատ անջատման հնարավորությունը,
- ջրագծից և ջրավազաններից ջուր օգտագործելու հնարավորությունը,
- Պաշտպանվածության աստիճանը - IPX5 (ջրից և փոշուց պաշտպանվածության աստիճան՝ համաձայն IEC 60529 միջազգային ստանդարտի), և այլն:

Ելնելով վերոգրյալից գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը որոշեց մերժել «ԿԱՊԻՏԱԼ ԳՐՈՒՊ« ՍՊԸ -ի կողմից ներկայացված հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Ա. Սիմոնյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել 1 մասնակից:

Հ/Հ	Ապրանքի անվանումը	Հ/Մ	Քանակը	Նախահաշվ. գումարը	Ընտրված կազմակերպության			Մրցույթին մասնակցող այլ կազմակերպությունների			
					անվանումը	գինը		անվանումները	գինը		
						առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով		առանց ԱԱՀ	ԱԱՀ	ԱԱՀ-ով
1	Մաքրման զանազան սարքեր /Բարձր ճնշման լվացող սարք/	հատ	3	1 944 000				«ԿԱՊԻՏԱԼ ԳՐՈՒՊ« ՍՊԸ	1 600 000	320 000	1 920 000

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 Մասնակիցների հետ բանակցություններ չեն վարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-23/9» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և այդպիսիք չճանաչված մասնակիցների որոշման մասին.

(Ա. Սիմոնյան)

4.1 Գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-23/9» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից հետո մինչև 10-րդ օրացուցային օրն ընկած ժամանակահատվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ

(Ա. Սիմոնյան)

5.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-23/9» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող Մ.Մկրտչյան

Գնահատող Ա. Ջհանգիրյան

Գնահատող Լ.Թունյան

Գնումները համակարգող՝ Ա. Սիմոնյան